տղայ լաւ կու կարդան։... Ի կէռլահ խօճայ Սօղօմոն ինքն իւր ընչիւքն ամենայն խարճօվ, քարէ եկեղեցի շինեց կէռլահ։ (Տէր Յովհաննէս Պաշվալովցի[1] առ [Մխիթար]. 1724 Յուլիս 8, [Պաշպալով])։

ժբ.

Այն օր փափն[2] նախ քան զծագելն արեգականն եկն ի պուքայ Վերիկնան, և ըստ սովո֊րութեան իւրում մնաց անդ մինչև ԺԲ ժամ աւո(ւ)րն և եկեղեցին դարտակ պահեն, զի այսպէս առնէ օրն մի յեկեղեցի գնայ որ ծխաւոր են և կանօնականք, հետ նոցա ասէ ժամակարգութիւնս և քննէ զամենայն ինչս։ Եւ մեր հայքն թողուն մտանելն ի ներս. այսօր աստ եղեալ ամենայն հայքն ներկայ էին փափի ժամերգութեանն, և վերջապէս իւր պատ(ա)րագին։ Ցոյս զոյ թէ մին օր ևս մեր եկեղեցին գալոց է։ Ամենայն օր շրջագայի ի յեկեղեցիս, ի յիւանդանոցս և ինքն ան֊ձամբն սպասաւորէ. զանթիւ տեղսդ, զտօշակս և զանկողինս կիզել ետ և զվերակացուս փոխել. անձամբն լսէ զխոստովանութիւն. տայ զօծումն վերջին։ Ջսրբութիւն առնէ, զձեռնադրութիւն և տեառնագրէ զեկեղ(ե)ցիս։ (Պաղտասար քահանայ Աբրահամեան Տիգրանակերտեան առ. Մխ. Աբբայ. 1724 Հոկտ. 22, Հռոմ)։

ժգ.

Վասն աւարտման շինուածոյն[3] յոյժ ուրախ եղէ մինչ լուայ, վասն որոյ ասեմ. շնորհաւոր շինուած եղիցի, որում նստիս բարով և վայելեսցես երջանկաբար հանդերձ սրբակրօն միաբանիւքն, և տէր տացէ գերարգութեանդ զկեանս առողջս և ապահովս, որով կարողանայցես աճեցուցանել շնորհիւ Տեառն զշինուածն հոգևոր՝ և բարձրացուցանել, և առ գագաթ կատարելութեան հասուցա֊նել, զի լինիցի տեղի ապաւինի և ժողովարան ազգին մերոյ փեռեկտեցելոյ, զոլով ի նմա բնակիչքն հովիւք զւարթունք, որ յամենայնում տեղւոջ և ժամանակի ջանայցեն խնդրել և կեցուցանել զկո֊րուսեալսն, որպէս և յուսամք։ (Յօհան եպս. Սեպաստիոյ առ Մխիթար Աբբայ. 1724 դեկտ. 2. ի Սուրբ Օնօփրիոսն ի Հռոմ)։

ժդ.

Սրբազան Վեհապետն[4] եկն յեկեղեցին մեր։ Ջիրաց զանազանաց զմին կէս ժամ խօսեցաք և համբուրեցաք զոտս նորա։ Եպիսկոպոսք ընկալան զհինգ հարիւր ներողութիւնս, քահանայք զե֊րեքհարիւր ներողութիւնս, և աշխարհական(ք) ամենեքին՝ որք գտան ներկայք՝ թէ արք և թէ կանայք ընկալան զհարիւր ներողութիւնս։ (Խաչատուր վարդապետ առ Մխիթար Աբբայ, 1725 մարտ 10. Հռոմ)։

---

1. Պաշպալովցի Տէր Յովհաննէս սոյն քաղաքին երէց քահանան է, որ և գրելով Եկեղեցւոյ կանգնուելուն համառօտ Յիշատակարան-պատմութիւնը՝ քանդակել տուեր է զայն անոր կողմնակի մէկ դրան վրայ։ Տաճարին շինութիւնը, յանուն Սուրբ Երրորդութեան, սկսած է 1723-ին։ Շինութեան «գործակից եղան, ինչպէս կ'երևնայ – կ'ըսէ Գովրիկեան – բոլոր ժողովուրդը՝ մեծամեծք ու փոքունք, արք և կանայք, ոմանք դրամ տալով ու ոմանք ձեռաց աշխատութիւն մատուցանելով» («Հայք յՆղիսաբեթուպոլիս Դրանսիլուանիոյ». Վիեննա, 1893, էջ 27)։ Այս ամէնը որոշ է Տէր Յովհաննէսի առ Մխիթար գրած նամակին մէջ, որ միանգամայն Եր. Հիմնադրին բա֊րոյական ամենամեծ ազդեցութեան և ժողովրդեան առջև անոր վայելած համբաւին փառաւոր փաստաթուղթ մ'է։
2. Բենեդիկտոս ԺԳ.։
3. Կ'ակնարկէ վանքիս Նորընծայարանի և այլ կարևոր շինութիւնները։
4. Բենեդիկտոս ԺԳ.։